



«ՀԱՅՅՐԱԲԱՂԱԲ»
ԴԱՇԻՆՔ

22 սեպտեմբերի, 2021 թ.

«Հայրաքաղաք» դաշինք

Ռաճկավար Ազատական կուսակցություն և «Ժառանգություն» կուսակցություն

Գյումրու զարգացման հայեցակարգ և նախընտրական ծրագիր

2021թ., սեպտեմբերի 22

«Հայրաքաղաք» դաշինք

Նախաբան

«Հայրաքաղաք» դաշինքը, ի նկատի ունենալով Գյումրի քաղաքի բարդ խնդիրների հաղթահարման, քաղաքի զարգացման, արդյունավետ և արդար կառավարման մարտահրավերները, մասնակցում է Գյումրու ավագանու 2021թ. հոկտեմբերի 17-ի ընտրություններին, հավակնելով ծանրակշիռ ներկայություն ունենալու Գյումրու ավագանու կազմում և ստանձնելու քաղաքի կառավարման կարևոր ու պարտավորեցնող գործը:

«Հայրաքաղաք» դաշինքը ընտրապայքարը մղելու է Գյումրու զարգացման լավագույն ուղիների որոնման համար, ակնկալելով բոլոր քաղաքական ուժերից բացառիկ հարգանք քաղաքի, քաղաքացիների և մրցակից ուժերի նկատմամբ՝ ինչպես նախընտրական շրջանում, այնպես էլ հետագայում:

Քաղաքի կարճաժամկետ և երկարաժամկետ զարգացման այս ծրագիրը մշակելիս «Հայրաքաղաք» դաշինքն ուսումնասիրել է հաշվի է առել Ալեքսանդրապոլ-Լենինական-Կումայրի-Գյումրի քաղաքի պատմությունը, վերելքներն ու անկումները, համայնքային մասնագիտական, ենթակառուցվածքային, աշխարհագրական, ընկերվարական կարողությունները և առանձնահատկությունները, կարիքները և համայնքային տնտեսության կառավարման վիճակը, նախընթաց ընտրություններում մասնակցած քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերը, ավագանու հաստատած՝ քաղաքի զարգացման նախորդ ծրագրերը, ինչպես նաև՝ հանրային տարբեր շահագրգիռ խմբերի և քաղաքացիների առաջարկությունները, ապա համադրել է դրանք, դասակարգել, սահմանել առաջնահերթությունները և ձեռակերպել է հայեցումներն ու ծրագրային դրույթները:

«Հայրաքաղաք» դաշինքը բարձր է գնահատում նախկինում Գյումրու քաղաքային տնտեսությունում և կառավարման համակարգում քաղաքային իշխանությունների իրականացրած զարգացման ծրագրերը և աշխատանքները, սակայն արձանագրում է, որ մի շարք ոլորտներում այդ աշխատանքները կարող էին ավելի արդյունավետ լինել, եթե լինել ավելի բարձր մակարդակի մասնագիտական մոտեցում, առաջնահերթությունների ավելի որակյալ սահմանում, բարեվարքության բարձր պատրաստակամություն, ավելի արդար և չարաշահումներից զերծ կառավարում:

**Գյումրի քաղաքի զարգացման նպատակով «Հայրաքաղաք» դաշինքի մշակած
նախընտրական հայեցակարգային դրույթները**

1988-ի երկրաշարժի, պատերազմների եւ այլ տեղական ու համապետական մակարդակների անարդյունավետ ու վատ կառավարման պատճառով Գյումրի քաղաքը հիմա ունի հազիվ կեսն այն բնակչության, ինչ ունեցել է նախաերկրաշարժյան տարում, ավելի քան 40 տոկոսի հասնող աղքատության մակարդակ, կիսավեր փողոցներ եւ բակեր, ենթակառուցվածքային խնդիրներ, մոտավորապես 3000 տնակային տնտեսություն եւ ժամանակավոր կացարան: Անցած տարիներին քաղաքը վերականգնել է նախաերկրաշարժյան իր արտադրական եւ արդյունաբերական ներուժի հազիվ 5 տոկոսը: Հաշվի առնելով այս ամենը եւ բազմաթիվ այլ տեղեկություններ եւ դիտարկումներ, 2021թ. հոկտեմբերի 17-ի ավագանու ընտրությունների նախաշեմին «Հայրաքաղաք» դաշինքի՝ Գյումրու զարգացման այս հայեցակարգը նախատեսում է.

Ա. Պահպանել տեղական ինքնակառավարման ոլորտի լավագույն փորձը, անհաջող փորձը բարեփոխել եւ Գյումրու տեղական ինքնակառավարումը դարձնել օրինակելի Հայաստանի համայնքների եւ օտարերկրյա գործընկեր քաղաքների համար:

Բ. Քաղաքային տնտեսությունը կառավարել եւ վարչարարությունն իրականացնել բացառիկ բարեվարքության սկզբունքով: Սա նշանակում բացառել կոռուպցիայի որեւէ դրսեւորում, այդ թվում կաշառակերությունը, հովանավորչությունը, պաշտոնեական եւ վարչարարական շահերի բախումը համայնքի շահերին, բացառել որեւէ համայնքային պաշտոնյայի, որեւէ ՀՈԱԿ-ի աշխատակցի դիրքի չարաշահումը, բացառել համայնքային միջոցների հաշվին համայնքային պաշտոնյաների հետ փոխկապակցված գործարարության կասկածելի սնուցումները, լինել խնայողական, թափանցիկ, հաշվետու: Տեղական ինքնակառավարումն իրականացնել քաղաքացիներին ծառայելու անբեկանելի սկզբունքով:

Գ. Բոլոր հնարավոր դեպքերում, համայնքային տնտեսության եւ տեղական ինքնակառավարման համակարգում ներդնել եւ օգտագործել նորագույն եւ նորացող տեխնոլոգիաները, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաները, վերարտադրվող էներգիայի անվնաս եւ կանաչ տեխնոլոգիաները: Զարգացնել «կանաչ քաղաք» ունենալու համար անհրաժեշտ բոլոր ճյուղերը, ոլորտները եւ ընթացակարգերը:

Դ. Օրենքով նախատեսված ձեւերով համագործակցել պետական իշխանության համապատասխան մարմինների հետ: Հետեւողականորեն պաշտպանել Գյումրի քաղաքի շահերը պետական մարմինների, գործարար աշխարհի, բնական մենաշնորհները կառավարող օպերատորների, գործընկեր երկրների, համայնքների, հիմնադրամների եւ քաղաքացիական հասարակության տեղական եւ միջազգային այլ հաստատությունների հետ հարաբերություններում:

Ե. Համայնքային խնդիրների լուծումների որոնումների համար առաջնային համարել քաղաքացիների իրավունքներն ու հավաքական շահը: Անկախ բարդությունից, հետեւողականորեն հաղթահարել համայնքային խնդիրները հանրային իրական

մասնակցությամբ եւ ժողովրդավար կառավարմամբ: Բացառիկ հարգանք դրսեւորել մարդու ազատությունների, իրավունքների եւ արժանապատվության նկատմամբ՝ անկախ մարդկանց սոցիալական, կրոնական, ազգային, առողջական եւ այլ առանձնահատկություններից: Համայնքային իշխանության լիազորությունների համատեքստում առաջնորդվել մարդկանց իրավահավասարության եւ արդար վերաբերմունքի արժանի լինելու սկզբունքներով: Ոչ ոք արտոնյալ չպետք է լինի, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

Ձ. Երաշխիքներ ապահովել Գյումրու ճարտարապետական, արհեստագործական, բանահյուսական, երաժշտական, երգարվեստի, պարարվեստի, կերպարվեստի եւ կիրառական արվեստի, մարզական, խոհարարական եւ այլ արժեքների ու ավանդույթների նկատմամբ հատուկ խնամքի, պաշտպանության եւ զարգացման համար:

Է. Գյումրու քաղաքային խնդիրները տեղական ինքնակառավարման մարմինների **կարողությունների իմաստով** դասակարգվում են երկու խմբի.

Է-1. Խնդիրներ, որոնք քաղաքային իշխանությունը կարող է լուծել սեփական նյութական, մասնագիտական եւ այլ միջոցներով, ինչպես նաեւ սեփական կարողությունների եւ հմտությունների կատարելագործմամբ:

Է-2. Խնդիրներ, որոնք քաղաքային իշխանությունը անկարող է լուծել սեփական միջոցներով եւ դրանց լուծման համար անխուսափելի է պետական, միջազգային եւ այլ գործընկերային աջակցությունը: Այս խմբի խնդիրների լուծումները հաճախ ենթադրում են իրավական եւ օրենսդրական դաշտի կատարելագործում, արտաքին խոշոր ներդրումների ուղղորդում, ֆինանսական եւ այլ միջոցների հայթայթում եւ ներգրավում:

Ը. Գյումրու քաղաքային խնդիրները **հրատապության իմաստով** դասակարգվում են երկու խմբի.

Ը-1. Խնդիրներ, որոնք անհետաձգելի լուծումների կարիք ունեն եւ առկա են տասնամյակներ շարունակ: Դրանք կարելի է համարել աղետային կամ մերձաղետային խնդիրներ, որոնց լուծումների պետք է լինեն հրատապ կամ արտակարգ, հակառակ դեպքում, դրանք ավելի են բարդանալու, ավելի մեծ վնաս են հասցնելու քաղաքին, իսկ ավելի ուշ ավելի բարդ եւ ծախսատար են լինելու դրանց լուծումները:

Ը-2. Ոչ հրատապ լուծումներ պահանջվող խնդիրներ, որոնք հեռանկարային զարգացման թիրախներ են: Դրանք երկարաժամկետ լուծումների եւ երբեմն ոչ պակաս ծավալուն ներդրումների կարիք ունեն:

Վերոհիշյալ հայեցակարգային սկզբունքների եւ համայնքի զարգացման կարիքների հիման վրա «Հայրաքաղաք» դաշինքը քաղաքային իշխանություն ստանձնելու դեպքում նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրային պարտավորությունները: Բոլոր այն դեպքերում, երբ նախատեսվող գործողությունը ենթադրում է 5 տարուց ավելի ժամանակահատված, հատուկ նշում է արված: Մնացած բոլոր դեպքերում, այդ գործողությունները նախատեսվում է իրականացել 2022-2026թթ ընթացքում:

- Քաղաքի համաչափ զարգացումը** սահմանել որպես գերակա սկզբունք բոլոր հնարավոր դեպքերում: Առաջիկա հինգ տարիներին ապահովել համայնքային միջոցների եւ հնարավոր ներդրումների ապակենտրոնացում ամբողջ քաղաքի տարածքով, փողոցների եւ բակերի նորոգումներ, ճանապարհների բարեկարգում, հանգստի գոտիների եւ խաղահրապարակների կառուցում, այն հաշվով, որ ամենուր համահավասար հարմարավետ դառնա ապրելու, ժամանցի եւ աշխատելու համար, չլինեն «արտոնյալ» թաղամասեր եւ տարածքներ:
- Հետևողականորեն արդիականացնել, բարեկարգել եւ նորոգել համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները՝ ՀՈԱԿ-ները** (մարզադպրոցներ, մանկապարտեզներ, թանգարաններ, արվեստի, նկարչական, երաժշտական, պարարվեստի դպրոցներ, փողային նվագախումբ եւ այլն), կատարելագործել սպասարկման որակը, հնարավոր դեպքերում ներդնել էլեկտրոնային գրանցումների եւ կառավարման համակարգեր: Ապահովել ՀՈԱԿ-ների համար բազմալեզու կայքերի ստեղծումը, անհրաժեշտ դեպքերում՝ տոմսերի, ամրագրումների թվայնացում, հեռախոսային հավելվածների ստեղծում:
- Համայնքային ծառայությունների կատարելագործում**
 - **Ապահովել բոլոր մանկապարտեզահասակ երեխաների համար մանկապարտեզի կամ նախակրթարանի ծառայության հասանելիություն**, վերանայել զեղչերի համակարգը: Մանկապարտեզներում ձեռավորել հատուկ կարիքներով երեխաների համար ներառական խմբեր: Հատուկ ջանքեր ներդնել ՀՀ պետական իշխանության համապատասխան մարմիններին բացատրելու եւ հիմնավորելու համար, որ նախադպրոցական կրթությունը Գյումրիում եւ այլ համայնքներում անվճար դարձնելը (ինչպես մայրաքաղաքում է) երկրի համաչափ զարգացման եւ այս ոլորտում ավանդական խտրականության վերացման հրամայական է:
 - **Թափառող շների խնդրի լուծում**. Ապաստարան-պահավայրի ստեղծում, կենդանիների հավաքում, տեղավորում ապաստարանում, պահպանման, սննդի, անասնաբուժական ծառայության ապահովում, ստերջացում:
 - **Աղբահանության կատարելագործում**
 - ❖ աղբամանների հեռավորությունների նորմավորում եւ տեղադրման սխեմայի վերանայում,

- ❖ մեծ եւ փոքր աղբամանների թվի ավելացում,
- ❖ աղբամանների արդիականացում,
- ❖ աղբավայրի տարածքի կարգավորում, ցանկապատում,
- ❖ աղբի սորտավորում եւ վերամշակում,
- ❖ աղբամանների տարածքների ախտահանում, սանմաքրում, վերահսկողություն:

- **Ներհամայնքային հասարակական տրանսպորտային համակարգի արդիականացում**
 - ❖ հասարակական տրանսպորտի հասանելիության ապահովում տրանսպորտային: հանգույցներն իրար կապելու եւ բոլոր թաղամասերի համար,
 - ❖ աշխատաժամերի սահմանում՝ 7:00-23:00.
 - ❖ երթուղիների վերամշակում հանրային կարիքներին համապատասխան,
 - ❖ օդանավակայանի չվերթերի ժամանակացույցին փոխկապակցված հատուկ ավտոբուսային երթուղու գործարկում դեպի քաղաքի կենտրոնական հյուրանոցներ,
 - ❖ մեքենաների որակի շարունակական թարմացում,
 - ❖ հենաշարժական դժվարություն ունեցող ուղեւորների համար հատուկ փոխադրամիջոցների ավելացում,
 - ❖ հստակ երթակարգի սահմանում եւ ցուցանակներով կանգառների կահավորում,
 - ❖ սպասարկման որակի բարելավում, այդ թվում՝ վարորդական էթիկայի նորմավորում,
 - ❖ կանգառների պաշտպանություն,
 - ❖ հեռախոսային ծրագրով ուղեւորների իրազեկում երթակարգի մասին,
 - ❖ վերոհիշյալ աշխատանքների վերահսկողություն, հեռանկարում՝
 - ❖ էլեկտրոնային քարտավորում:
- **Քաղաքի կենտրոնական փողոցներում եւ շուկայամերձ տարածքներում տարածված փողոցային առետուրը կրճատվելու է, առետրականների եւ մասնագետների հետ քննարկումների արդյունքում այդ առետուրը զգալի ծավալով տեղափոխվելու է սանիտարահիգիենիկ պատշաճ պայմաններով վաճառակետեր:**
 - ❖ Մայթերն ազատագրվելու են սննդի եւ այլ անկանոն առետրից:
 - ❖ Շուկայի աշխատանքի կարգավորում, տեղափոխում եւ ապակենտրոնացում՝ տարբեր թաղամասերում ստեղծելով շուկայական պատշաճ պայմաններով տարածքներ,
 - ❖ վերահսկողության ապահովում:

- **Գերեզմանատների կառավարում**
 - ❖ ստվերային տնտեսության վերացում,
 - ❖ գերեզմանոցային տնտեսության եւ կառավարման բարեփոխում, հաստիքների եւ դրույքների վերանայում, միջգերեզմանային տարածքներում եւ անցուղիներում աղբահանություն եւ մաքրության ապահովում,
 - ❖ քարտեզագրում, տվյալների թվայնացում,
 - ❖ հողահատկացման պարզեցում եւ ստանդարտացում,
 - ❖ վճարովի ծառայությունների ներդրում,
 - ❖ սգո պարագաների վաճառքի կարգավորում:
- Բնական մենաշնորհային ծառայությունների օպերատորների (գազամատակարարում, էներգամատակարարում, ջրմուղ-կոյուղի եւ այլն) հետ հարաբերություններում համայնքի շահերի կոշտ պաշտպանություն:

4. Քաղաքաշինություն

- «Կումայրի» պատմամշակութային արգելոցի պահպանություն, հայտնի հուշարձան-շինությունների նորոգում կամ նորոգմանն օժանդակություն,
- հասարակական զուգարանների կառուցում եւ շահագործում,
- գետնանցումների նորոգում,
- ավտոկայանի խնդրի կարգավորում,
- Ալեք Մանուկյան փողոցի կամրջի հետազոտություն եւ պատշաճ նորոգում,
- Կիսավեր եւ վթարային շենքերի վտանգների չեզոքացում,
- զբոսաշրջային ավտոբուսների համար կայանման տարածքի հատկացում եւ կահավորում,
- վթարային պաշգամբների նորոգմանն օժանդակություն,
- շենքերի մուտքերի եւ ելքերի վթարային մատչելիության ապահովում, անկանոն ավտոտնակների կառավարում,
- զավթված հանրային տարածքների, մայթերի, գազոնների, բակերի վերադարձ քաղաքացիներին, համայնքապատկան տարածքներում ապօրինի շինությունների վերացում կամ հնարավոր դեպքերում՝ օրինականացում, համայնքային շահի գերադասմամբ,
- քաղաքի տարբեր հատվածներում առկա շատրվանների նորոգում եւ վերագործարկում,
- քաղաքի հարավային մուտքից՝ Երեւանյան խճուղուց կամ քաղաքային մուտքի հատվածից դեպի Մսի կոմբինատ թաղամաս ավտոմոբիլային անցման ստեղծում՝ գծանցով արգելափակոցով, ապա, միջոցների հայթայթման դեպքում՝ կամրջով,
- կանաչ տարածքների պահպանություն եւ զարգացում, լանդշաֆտային/տարածակազմակերպական մշակումների ներդրումներ եւ զբոսայգիների արդիականացում,
- Գյումրի եւ մյուս գետակների մաքրում, կուլեկտորների կառուցում, Գյումրի գետակի թունելի նորոգում եւ մաքրում,
- ջրահեռացման համակարգի վթարային հատվածների նորոգում եւ մասնակի վերակառուցում,
- միջպետական նշանակության ներքաղաքային ճանապարհների հիմնանորոգում,

- հեծանվուղիների ստեղծում,
- ընտանի կենդանիների զբոսանքի տարածքների ստեղծում:

Հեռանկարում՝ 2026թ-ից հետո նաեւ.

- «Կումայրի» պատմամշակութային արգելոցի պահպանություն, հայտնի հուշարձան-շինությունների նորոգում կամ նորոգմանն օժանդակություն,
- վթարային պաշտպանների նորոգմանն օժանդակություն,
- քաղաքի տարբեր հատվածներում առկա շատրվանների նորոգում եւ վերագործարկում,
- Գյումրու միջով անցնող կոլեկտորների կառուցում, Գյումրի գետակի թունելի մաքրում,
- Ջրահեռացման համակարգի վթարային հատվածների նորոգում եւ վերակառուցում,
- միջպետական նշանակության ներքաղաքային ճանապարհների հիմնանորոգում,
- հեծանվուղիների ստեղծում,
- ներկայանալի պատկերասրահի ստեղծում,
- ժամանակակից կենդանաբանական եւ բուսաբանական այգիների ստեղծում,
- ընտանի կենդանիների զբոսանքի տարածքների ստեղծում:

5. Զբոսաշրջության խթանում

- հուշարձանների, շենքերի եւ փողոցների առնվազն 2 լեզուներով ցուցանակներով կահավորում,
- զբոսաշրջային տեղեկատվական քաղաքային կենտրոնի ստեղծում,
- աշխարհագրական տեղեկատվական համակարգի (USZ-GIS) կիրառում,
- զբոսաշրջային թիրախների ցանկի վերամշակում, սահմանում եւ լայն կիրառության խթանում,
- քաղաքի բազմալեզու քարտեզներով ցուցանակների տեղադրում, ուղեցույց տպագիր քարտեզների մշակում եւ տարածում զբոսաշրջային գործով զբաղվող անձանց եւ օջախներում (տրանսպորտային հանգույցներ, օպերատորներ, զբոսավարներ, տեղեկատվական կենտրոններ, թանգարաններ եւ այլն),
- արժանավոր մարդկանց, հուշարձան-շինությունների, արժանահիշատակ իրադարձությունների վայրերում հուշատախտակների տեղադրում եւ արդիականացում արագ ընթերցվող կոդերով (QR) եւ այլ եղանակներով,
- քաղաքացիների հետ քննարկումների միջոցով եւ համաձայնությամբ՝ ավտոմեքենաների երթեւեկությունից զերծ օրերի եւ ժամերի սահմանում զբոսաշրջային հատուկ նշանակության փողոցներում եւ տարածքներում,
- վերգետնյա, իսկ հետագայում ստորգետնյա անցումների ստեղծում դեպի Անկախության հրապարակի կանաչ տարածք, եւ տարածքի սոցիալականացում առանց որեւէ վերակառուցման կամ կանաչ հատվածների կրճատման,
- մեծ եւ տեսարանները փակող գովազդների եւ գովազդային մակերեսների մասնակի կրճատում,
- նոր պրոֆիլային թանգարանների, մշակութային, արհեստագործական, գաստրոնոմիական եւ այլ փառատոնների շարքերի եւ ցուցահանդեսների կազմակերպում,

- արհեստավորաց փողոցի եւ արհեստանոցների հիմնում:

Հեռանկարում՝ 2026թ-ից հետո նաեւ.

- նոր պրոֆիլային թանգարանների, մշակութային, արհեստագործական, գաստրոնոմիական եւ այլ փառատոնների շարքերի եւ ցուցահանդեսների կազմակերպում,
- արհեստավորաց փողոցի զարգացում,
- ձմեռային զբոսաշրջության ենթակառուցվածքների ստեղծում քաղաքամերձ տարածքներում,
- քաղաքամերձ տարածքում մեծ զբոսայգու ստեղծում:

6. Ներդրումների խթանում

- համայնքապետարանում **հատուկ բաժնի ստեղծում** քաղաքային տնտեսության մեջ ներդրումների եւ դրամաշնորհների ներգրավման համար. առաջարկների ցանկի, քարտեզի, իրավակարգավորումների փաթեթի կազմում ներդրողների համար, նախաձեռնողական արշավների կազմակերպում ներդրումների խթանման համար,
- **քաղաքի զարգացման հիմնադրամի ստեղծում** այլընտրանքային միջոցների ներգրավման, զարգացման եւ սոցիալական ձեռնարկատիրական ծրագրերի իրականացման համար,
- ներդրումային ծրագրերի **վարչարարության պարզեցում**, ՀՀ կառավարության եւ ոլորտային նախարարությունների հետ համագործակցությամբ «Կումայրի» պատմամշակութային արգելոց թանգարանի տարածքում եւ քաղաքով անցնող միջպետական ճանապարհների հարակից հատվածներում կապիտալ ներդրումների վարչարարության արդյունավետացում,
- հարկային, վարկային, սոցիալական եւ այլ **արտոնությունների ստացման համար** պետական իշխանությունների հետ համագործակցություն եւ բացատրական աշխատանք, մասնակցություն եւ աջակցություն ՀՀ ապակենտրոնացման եւ համաչափ զարգացման գործընթաններին:

7. Սոցիալական օժանդակություն

- սոցիալական պաշտպանության փաթեթների ներդրում քաղաքապետարանի եւ ՀՈԱԿ-ների աշխատողների համար,
- Գյումրիում հաշվառված յուրաքանչյուր նորածնի համար միանվազ 40.000 դրամի օժանդակության տրամադրում՝ անկախ ծննդյան վայրից,
- քաղաքի խիստ կարիքավորների, պատերազմների զոհերի ընտանիքների եւ հաշմանդամների համար հատուկ ընկերվարական օժանդակությունների ավանդույթի շարունակում եւ զարգացում, ներառականության խթանում,

Առաջիկա հինգ տարում եւ հետագայում.

- Ժամանակավոր կացարանների եւ տնակային տնտեսությունների վերացում, պետական եւ բարեգործական միջոցների ներգրավմամբ անօթեւանության մեղմում, այդ թվում՝ անօթեւանների վերաբնակեցման համար լքված կիսակառույցների

վերակառուցում, սոցիալական բնակարանների կառուցում եւ հատկացում առանց սեփականության իրավունքի շնորհման:

8. Արտաքին կապերի զարգացում

Առաջիկա հինգ տարում եւ հետագայում.

- միջազգային մարզական մրցաշարերի կազմակերպում,
- թեթև արդյունաբերության, գյուղատնտեսական առաջնային եւ վերամշակված մթերքի, կիրառական արվեստի միջազգային տոնավաճառների կազմակերպում,
- ներհայաստանյան եւ արտաքին կապերի զարգացում. փոխշահավետ գործընկերության հաստատում համայնքների հետ, գործընկեր երկրների, համայնքների, միջազգային կազմակերպությունների, դեսպանատների հետ,
- օժանդակություն Հայաստանում դեսպանություն ունեցող երկրների հյուպատոսությունների հիմնման համար,
- Գյումրու քույր քաղաքների մշակութային, առևտրային, զբոսաշրջային ներկայացուցչությունների ստեղծում, ինչպես նաև Գյումրու ներկայացուցչությունների ստեղծում քույր քաղաքներում,
- ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության եւ Հարավկովկասյան երկաթուղու կառավարիչների հետ համագործակցությամբ Գյումրուց դեպի Վրաստան եւ ՀՀ այլ քաղաքներ երկաթուղային մարդատար երթուղիների գործարկում,
- օդանավակայանի չվերթերի եւ ուղղությունների ավելացմանն ուղղված աշխատանքների իրականացում,
- միջազգային լոգիստիկ կենտրոնի ծրագրի իրագործում:

9. Ոչպետական եւ շահույթ չհետապնդող կազմակերպությունների հետ համագործակցություն համայնքային խնդիրների կարգավորման համար

- Համատիրությունների աշխատանքի օժանդակություն. խորհրդատվություն, դրամաշնորհներ եւ վերահսկողություն,
- օժանդակություն բարձրահարկերի վերելակային տնտեսությանը, այն նորոգելու եւ վերագործարկելու նպատակով,
- ոլորտային հասարակական կազմակերպությունների, մասնագիտական միավորումների, հիմնադրամների, բարեգործական, կրոնական կազմակերպությունների ներգրավում քաղաքային խնդիրների լուծման համար փոխշահավետ գործընկերության մեջ:

10. Անվտանգային խնդիրների կարգավորումներ

- **Ենթակառուցվածքային լուծումներ**
 - ❖ գիշերային լուսավորության ցանցի ընդարձակում, լուսավորության որակի բարելավում, լուսավորման ժամերի վերանայում,
 - ❖ փողոցների եւ վթարավտանգ խաչմերուկների կահավորում ճանապարհային նշաններով, կոճակային կառավարմամբ եւ սովորական լուսակիրներով, գծանշում, մեքենաների արագության սահմանափակման արդյունավետ միջոցների ներդրում,

- ❖ թեքահարթակների արդիականացում,
- ❖ Ճանապարհային ուստիկանության հետ համագործակցությամբ հասնել նրան, որ Գյումրու ՃՏՊ-ներում ոչ մի գոհ չլինի:
- ❖ ձյան եւ սառույցի մաքրման համակարգի կատարելագործում:
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության եւ կառավարության հետ քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում համայնքապատկան հաստատություններում. վարժանքներ, ռիսկերի կառավարում, ապաստարանների առկայություն, կահավորանք:
- Զբոսայգիներում ատրակցիոնների եւ խաղերի անվտանգության վերահսկողություն:

11. Արդյունավետ կառավարում

- Համայնքային տնտեսության նախընթաց կառավարման եւ ֆինանսական միջոցների արտաքին աուդիտորական ստուգում:
- Համայնքային կառավարման, կառավարիչների եւ ավագանու բարեվարքության համակարգի մշակում եւ ներդրում. Կոռուպցիայից եւ շահերի բախումներից զերծ, հովանավորչությունը բացառող տեղական ինքնակառավարում է ունենալու Գյումրի քաղաքը:
- Բարձր որակի հաշվետվողականության եւ թափանցիկության, հանրային մասնակցության ավելի բարձր մակարդակի ապահովում:
- Շինարարական ընթացակարգերի, վարչարարության եւ փաստաթղթաշրջանառության պարզեցում:
- Համայնքային միջոցների (ֆինանսներ, աշխատուժ, հողեր, շինություններ, սարքավորումներ եւ այլն) արդյունավետ օգտագործում, աճուրդային եւ գնումների համակարգերի կատարելագործում եւ թվայնացում, աշխատակազմի եւ համայնքի կարիքների եւ կարողությունների, բոլոր միջոցների գնահատում:
- Տեղական եկամտային դաշտի վերագնահատում եւ եկամտային քաղաքականության վերամշակում:
- ՀՈԱԿ-ների եւ համայնքային ծառայողների արդար եւ բարեխիղճ մրցույթների պրակտիկայի ձեւավորում. ՏԻՄ եւ ՀՈԱԿ համակարգերում աշխատելու են այն ամենապատրաստված մասնագետները, որոնց կարելի է գտնել եղած ֆինանսական հնարավորությունների սահմաններում:
- Համայնքապետարանին ենթակա ծառայողական ավտոպարկի ներդրում անհատական ծառայողական ավտոմեքենաների փոխարեն,
- Աշխատակազմի մասնագիտական կարողությունների զարգացման համար՝ շարունակական վերապատրաստումների եւ կատարելագործման մեխանիզմի սահմանում:
- Համայնքային բյուջեից վճարվող աշխատողների համար պարգևավճարների արդար համակարգի ներդրում:

Այս հայեցակարգն ու ծրագիրը մշակել է «Հայրաքաղաք» դաշինքը:

Այս փաստաթուղթը ազատ է ցանկացած օգտագործման համար՝ հղման պայմանով: